«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

14.10.15թ. N: Պ/Լ1-03/2453
Ձեր N:

Հաստատված է

ՀՀԳՆՁՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/1-15/33 ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի

2015 թվականի հոկտեմբեր 14-ի թիվ 15/33-1 որոշմամբ

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

ՀՐԱՎԵՐ

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԱՌԵԼԻՔԻ (ԲԵՆԶԻՆ ՊՐԵՄԻՈՒՄ, ԲԵՆԶԻՆ ՌԵԳՈՒԼՅԱՐ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ) ***ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ***

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ ***վառելիքի*** ձեռքբերման նպատակով կազմակերպել է «**ՀՀԳՆՁՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/1-15/33**» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող «7»-րդ աշխատանքային օրվա ժամը «15^{00}»-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ «7»-րդ աշխատանքային օրվա ժամը «15^{00}»-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am:

Հեռ՝ (055) 55-78-35:

Պատվիրատու՝ ***«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ***

Գլխավոր տնօրեն՝ ***Պատրիկ Լորեն***

Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրինություն
Հեռ. 54 06 85